527

1. Շնորհակալ ենք, Տե՛ր Հիսուս,
Որ սիրում ես բոլորին,
Ներում ես մեղավորին,
Մեր խաչյալ Հիսուս Փրկիչ:
Մենք միշտ Քեզ ենք պարտական,
Քո արյունով մաքրվեցինք,
Առաջնորդիր մեզ Քո լույսով,
Հավատում ենք Քեզ սրտով:

Քեզ միշտ փառք ենք տալիս,
Երկնային Տեր, Սուրբ Հիսուս,
Օրհնյալ ես Դու, մեր Տեր,
Դու՝ հույս, հավատք և սեր:

2. Սպասում ենք Քեզ կարոտով,
Շուտ արի Քո Հոր փառքով,
Լցված ենք մենք Սուրբ Հոգով,
Կանչում ենք մեր աղոթքով:
Մենք միշտ Քեզ ենք պարտական,
Քո արյունով մաքրվեցինք,
Դու լույսն ես, առաջնորդի՛ր,
Տա՛ր մեզ վեր այս աշխարհից:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025